ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18» հոկտեմբերի 2016 թվականի N 83 ք.Գյումրի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ հոդվածների, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հովհաննես Հովհաննիսյանի 2016 թվականի հոկտեմբերի 13-ի դիմումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն և 4 աշխատանքային օր ամենամյա լրացուցիչ արձակուրդները՝ 2016 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև նոյեմբերի 24-ը ներառյալ:
2. Հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:
3. Ամենամյա արձակուրդի ընթացքում աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության առողջապահության բաժնի պետ Լեյլի Ասլանյանին:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝